ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/153

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի Մանկան Տուն» ՊՈԱԿ
Մասնակից՝ «Ազուռ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, սննդամթերքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-Ա»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9357-2021 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի Մանկան Տուն» ՊՈԱԿ-ի 04.06.2021թ.-ի գրության հիման վրա, 10.06.2021թ.-ին «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 10.06.2021թ.-ին:

10.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/153 համարի ծածկագիրը:

17.06.2021թ.-ին և 02.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.07.2021թ.-ին:

2. **<u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի Մանկան Տուն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի Մանկան Տուն» ՊՈԱԿ-ը 04.06.2021թ.-ի գրությամբ գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՄՏ-Ա» ծածկագրով «Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման հետ կապված «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի 27.05.2021թ նամակի հիման վրա «Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ-ը միակողմ ամբողջովին լուծում է կողմերի միջև կնքված մատակարարման պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ազուռ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ազուռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 11.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Ազուռ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9357-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/153 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ.-ին կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-Ա» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի, պայմանագիրը ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացույցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ:

iv. Պատվիրատուի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 31.01.2021թ.-ին կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-Ա» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

v. Համաձայնագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի Պատվիրատուի հայտի հիման վրա՝ մինչև 30.12.2021թ.-ը:

vi. 27.05.2021թ.-ին «Ազուռ» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ 29.12.2020թ.-ին կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-Ա» ծածկագրով պայմանագիր, որին կից 15.02.2021թ.-ին կնքվել է համաձայնագիր «Ազուռ»ՍՊԸ-ի և «Երևանի Մանկան Տուն» ՊՈԱԿ-ի միջև համապատասխան ֆինանսական միջոցների առկայության համար: Պայմանագրի շրջանակներում «Ազուռ» ՍՊԸ-ն պետք է մատակարարեր 80 կգ ՈՉ Կաթնային շիլա Մանկական սնունդ/ չափաբաժին 54/ 4500դրամով, 657 կգ Կաթնային շիլա /չափաբաժին 55/ 5800 դրամով և 438կգ Ադապտացված մանկական սնունդ/ըմպելիք /չափաբաժին 58/ 2800դրամով, որը մինչև այս պահը պատշաճ մատակարվել է, սակայն ՍՊԸ-ն բանակցության ժամանակ առաջարկել է սխալ միավորի գին կրելով մեծ ֆինանսական կորուստներ: Հաշվի առնելով ՀՀ-ում նոր կորոնավիրուսի համաճարակով (Covid 19) սահմանված սահմանափակումներով պայմանավորված ֆինանսատնտեսական իրավիճակը և դրա հետևանքով տնտեսության հասցված վնասները նաև տվյալ ապրանքների թանկացումները ՍՊԸ-ն այլևս ի վիճակի չի մատակարարել տվյալ պայմանագրից նշված 3 չափաբաժինները: Հաշվի առնելով ՍՊԸ-ի կրած վնասները վերջինս խնդրել է միակողմանի լուծել ամբողջ պայմանագիրը:

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 31.05.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուր» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ-ին կնքված «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-Ա» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Ազուր» ՍՊԸ-ն չի կատարել կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալը, համաձայն որի «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ը լուծում է վերը նշված պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9357-2021 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունն անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի

մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ.-ին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-Ա» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայության մատուցումը պետք է իրականացվի, այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացույցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ.:

Պատվիրատուի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 31.01.2021թ.-ին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-Ա» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի Պատվիրատուի հայտի հիման վրա՝ մինչև 30.12.2021թ.-ը:

27.05.2021թ.-ին «Ազուռ» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ 29.12.2020թ.-ին կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-Ա» ծածկագրով պայմանագիր, որին կից 15.02.2021թ.-ին կնքվել է համաձայնագիր «Ազուռ»ՍՊԸ-ի և «Երևանի Մանկան Տուն» ՊՈԱԿ-ի միջև համապատասխան ֆինանսական միջոցների առկայության համար: Պայմանագրի շրջանակներում «Ազուռ» ՍՊԸ-ն պետք է մատակարարեր 80 կգ ՈՉ Կաթնային շիլա Մանկական սնունդ /չափաբաժին 54/ 4500դրամով, 657 կգ Կաթնային շիլա /չափաբաժին 55/ 5800 դրամով և 438կգ Ադապտացված մանկական սնունդ/ըմպելիք /չափաբաժին 58/ 2800դրամով, որը մինչև այս պահը պատշաճ մատակարվել է, սակայն ՍՊԸ-

ն բանակցության ժամանակ առաջարկել է սխալ միավորի գին կրելով մեծ ֆինանսական կորուստներ: Հաշվի առնելով ՀՀ-ում նոր կորոնավիրուսի համաճարակով (Covid 19) սահմանված սահմանափակումներով պայմանավորված ֆինանսատնտեսական իրավիճակը և դրա հետևանքով տնտեսության հասցված վնասները նաև տվյալ ապրանքների թանկացումները ՍՊԸ-ն այլևս ի վիճակի չի մատակարարել տվյալ պայմանագրից նշված 3 չափաբաժինները: Հաշվի առնելով ՍՊԸ-ի կրած վնասները վերջինս խնդրել է միակողմանի լուծել ամբողջ պայմանագիրը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուր» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ-ին կնքված «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-Ա» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Ազուր» ՍՊԸ-ն չի կատարել կնքված պայմանագրով ստանձնաց պարտավորությունների ողջ ծավալը, համաձայն որի «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ը լուծել է վերը նշված պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 31.05.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Ազուռ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 31.05.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ազուռ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9357-2021 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/153 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ազուռ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**